

ԽՍՀՄ Ժողովրդների Կենտրոնական ՀրԱՏ.
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՅԵՐԵՍՈՎ
ԴԵՊԻ
ՏԵԽՆԻԿԱ

1931

338.4(47)
Ե-80

ԽՍՀՄ Ժողովրդ. ԿենՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Հ. ԿՈՎԿԱՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ս. Սնդրեյիվ.—Սոցիալիստական շինարարության նոր եռագլ 6 4	
2. Կուրեյիվ.—Կուլակը կոլտոզի թշնամի 5 »	
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 »	
4. Սեալին.—Պատասխան ընկեր կոլտոզիկներին 5 »	
5. Մ. Գիգոյան.—Կոլտոզների մասին 6 »	
6. Վ. Իվանով.—Նոր եռագլ 5 »	
7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրություն 2 »	
8. Կնոջ աշխատանքը կոլտոզում 8 »	
9. Ա. Սնդրեյիվ.—Հյուս. Կովկ. գյուղատնտեսության սոցիալական- առցման խնդիրները 2 »	
10. Կալեին.—Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտես- թյունը կոլտոզներում 8 »	
11. Ս. Սնդր.—Սոցիալիստական շինարարության գոտում 3 »	
12. Հյուս. Կովկ. Սերկր. ձխախոտագործական միության զինված 2 »	
13. Հի(բ)Կ Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի ղեկավարումը) 15 »	
14. Ա. Նովոսելով.—Երգ մարտական փորձի (բանաստեղծու- թյուններ) 20 »	
15. Հյուս. Կովկ. յերկրային 6 կուկոնֆերենցիայի բանաձևերը 8 »	
16. Զարգացրեք կենդանարուծությունը կոլտոզներում 5 »	
17. Ցեղիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 »	
18. Միկուլա.—Դեպի նոր կենցաղը կոլտոզներում 5 »	
19. Սկոմորոսով.—Պայտանեցեք անասուններին վարակումից 5 »	
20. Պոլցովսկի.—Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կեն- դաններին 6 »	
21. Հնգամյակի յերրորդ տարվա շնորհի 16 »	
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և գ. ա. սոց. վերա- կառուցումը 10 »	
23. Ա. Ի. Մեդվեդով.—Հացահատիկների բերքահավաքը և կալը 8 »	
24. Միխիլով.—Բանջարանոցային կուլտուրաների խնամքը 8 »	
25. Պ. Մ. Շախոն.—Արտադրական խորհրդակցությունները կոլ- տոզներում 12 »	
26. Ա. Ի. Բոստանցյան.—Անասնաբուծական կոլտոզի և նրա մասնաշյուղերի կառավարումը 20 »	
27. Ա. Մեմորյան.—Խորհուրդների վերընարությունների հիմնական խնդիրները 7 »	
28. Խորհուրդների վերընարությունների գործնական խնդիրները 8 »	
29. Լևրապոզի խորհուրդները (պիտեսա) 10 »	
30. Ուոսիևով.—Կուլակության վերացումը և խորհուրդների խնդիրները 7 »	
31. Բոստանցյան.—Համատարած կուլկաիվացման ավարտումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները 10 »	

ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊՈ ՏԵԽՆԻԿԱ

1. ՏԵՏԵՍԱԿԱՐՆԵՐ ԱՆԱԿԵՐՆԵՐ ՄԱՍԻՆ
ԲԵՂ. Սեալինի ձուռը սոցիալիստական արդյունաբե-
րության աշխատողների կոնֆերենցիայում

2. ԵՎԱՆՈՎ ԴԵՍՈՒԹԵԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ
ՍԱՐԱՐՈՎ
ՀամԿԵՍՄ ԿԵ-ի բյուրոյի, ինչ Մոսկվ. Կոմիտեյի,
Վոստոկոսկայա Պրավդա-յի խմբիդեգիայի, Համ-
ԿԵՍՄ սեալինյան ԼԵ-ի, Երկհրագործարանի բան-
վորների ու կոմիտեականների միացյալ նիստի վո-
րումը



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

00 APR 2013

ЛИЦОМ К ТЕХНИКЕ

1. О задачах хозяйственников
(речь тов. Сталина)

2. Взять крепость науки и
техники



59672-66

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
«К Р А Й Н А Ц И З Д А Т.»

ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊՐ ՏԵԽՆԻԿԱ

1. ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Ընկեր Սաալինի նաոր սոցիալիստական արդյունաբե-
րության աշխատողների կոնֆերենցիայում

Ընկերներ, ձեր կոնֆերենցիայի աշխատանքները վեր-
ջանալու վրա յեն: Այժմ դուք պետք է բանաձևեր ընդու-
նեք: Չեմ կասկածում, վոր դրանք կընդունվեն միաձայն: Այդ
բանաձևերում, — յես նրանց քիչ ծանոթ եմ, — դուք հավա-
նություն եք տալիս արդյունաբերության՝ 1931 թվականի
ստուգիչ թվերին և պարտավորվում եք կատարել նրանց:

Բոլշեկիկ խոսքը լուրջ խոսք է: Բոլշեկիկները սովոր են
կատարել իրենց տված խոստումները: Բայց ի՞նչ է նշանա-
կում 1931 թվականի ստուգիչ թվերը կատարելու պարտա-
վորություն: Այդ նշանակում է ապահովել արդյունաբերա-
կան արտադրանքի ընդհանուր աճը 45 տոկոսով: Իսկ այդ
շատ մեծ խնդիր է: Ավելին — այդ նշանակում է, վոր դուք
վոչ միայն խոստանում եք մեր հնգամյակը կատարել 4
տարում, — այդ դործն արդեն վճռված է և այստեղ այլևս վոչ
մի բանաձև պետք չէ — այդ նշանակում է, վոր դուք խոստա-
նում եմ արդյունաբերության հիմնական, վնոողական նյութե-
րում ննգամյակը կատարել 3 տարում:

Այդ լավ է, վոր կոնֆերենցիան խոստում է տալիս կա-
տարել 1931 թվականի պլանը, կատարել հնգամյակը 3 տա-
րում: Սակայն մենք շատ բան ենք սովորել «գաոր փորձից»:

Մենք զխանք, վոր խոստումները միշտ չեն կատարվում: 1930 թվականի սկզբում ևս տրվել էր այդպիսի խոստում— կատարել տարեկան պլանը: Այն ժամանակ հարկավոր էր մեր արդյունաբերությունն արտադրանքն ավելացնել 31—32 տոկոսով: Բայց և այնպես, խոստումը լիակատար չափով չկատարվեց: Իրականում 1930 թվականի ընթացքում արդյունաբերության արտադրանքի աճը կազմեց 25 տոկոս: Մենք պետք է հարց տանք՝ արդյոք նույնը չի՞ կրկնվի այս տարի: Մեր արդյունաբերության ղեկավարները, աշխատողներն այժմ խոստում են տալիս 1931 թվականին արդյունաբերության արտադրանքն ավելացնել 45 տոկոսով: Բայց ի՞նչ յերաշխիք կա, վոր խոստումը կկատարվի: Ի՞նչ է պահանջվում նրա համար, վորպեսզի կատարել ստուգիչ թվերը, վորպեսզի տալ արտադրանքի 45 տոկոս աճ, վորպեսզի հաջողեցնել հնգամյակի կատարումը վոչ թե 4, այլ հիմնական և վճռական ճյուղերում — 3 տարում:

Դրա համար պահանջվում է յերկու հիմնական պայման: Առաջինը—վորպեսզի զրա համար լինեն ունի, կամ ինչպես մեզանում արտահայտվում են, «որեկտիվ» հնարավորություններ»:

Յերկրորդ — վորպեսզի ցանկություն և կարողություն լինի մեր ձեռնարկությունները ղեկավարել այնպես, վոր այդ հնարավորություններն ոգտագործվեն իրականում:

Արդյոք անցյալ տարի մեզանում յեղե՞լ են «որեկտիվ» հնարավորություններ պլանի լիովին կատարման համար: Այո, յեղել են: Անվիճելի փաստերը վկայում են այդ մասին: Այդ փաստերը կայանում են նրանում, վոր անցյալ տարվա մարտին և ապրիլին, նախորդ տարվա համեմատությամբ, արդյունաբերությունը տվեց արտադրանքի 31 տոկոս աճում: Հարց է առաջ գալիս—հապա ինչո՞ւ մենք չկատարեցինք

ամբողջ տարվա պլանը: Ի՞նչը խանգարեց: Ի՞նչն էր պահասում: Պակասում էր յեղած հնարավորություններն ոգտագործելու կարողությունը: Պակասում էր գործարանները, ֆաբրիկաները, հանձնարարներ նիւս ղեկավարելու կարողությունը:

Մենք ունեյինք առաջին պայմանը—«որեկտիվ» հնարավորություններ պլանը կատարելու համար: Բայց մենք բավականաչափ չունեյինք յերկրորդ պայմանը—արտադրությունը ղեկավարելու կարողությունը: Յեւ հենց այն պատճառով, վոր պակասում էր ձեռնարկությունները ղեկավարելու կարողությունը,—հենց այդ պատճառով պլանը չկատարվեց: Աման 31—32 տոկոսի փոխարեն մենք տվինք միայն 25 տոկոս:

Իհարկե 25 տոկոս աճումը մեծ բան է: Վոչ մի կապիտալիստական յերկիր 1930 թվականին չի ունեցել և այժմ էլ չունի արտադրանքի աճում: Առանց բացառություն լոր կապիտալիստական յերկրներում տեղ ունի արտադրություն խիստ անկում: Այսպիսի պայմաններում 25 տոկոս աճումը մի մեծ քայլ է դեպի առաջ: Բայց մենք կարող եյինք տալ ավելին: Դրա համար մենք ունեյինք բոլոր անհրաժեշտ «որեկտիվ» պայմանները:

Այսպես ուրեմն, ի՞նչ յերաշխիք կա, վոր այս տարի չի կրկնվի անցյալ տարվա պատմությունը, վոր պլանը կկատարվի լիովին, վոր յեղած հնարավորությունները մենք կոգտագործենք այնպես, ինչպես պետք է ոգտագործել նրանց, վոր մեր խոստումը վորոշ չափով չի մնա թղթի վրա:

Պետությունների պատմության, յերկրների, բանակների պատմության մեջ յեղել են ղեպքեր, յերբ գոյություն են ունեցել բոլոր հնարավորությունները հաջողության համար, հաջողության համար, բայց նրանք, այդ հնարավորությունները մնացել են ապարդյուն, քանի վոր ղեկավարեն

բը չեն նկատել այդ հնարավորութիւնները, չեն կարողացել ողտադործել նրանց և բանակները պարտութիւն են կրել:

Արդյոք մեզանում կան այն բոլոր հնարավորութիւնները, վորոնք անհրաժեշտ են 1931 թվականի ստուգիչ թվերը կատարելու համար:

Այո, մեզանում կան այդպիսի հնարավորութիւններ: Ինչպէս են կայանում այդ հնարավորութիւններն, ինչ է պահանջվում, վորպեսզի այդ հնարավորութիւնները գոյութիւն ունենան իրականում:

Ամենից առաջ պահանջվում են մեր յիշկրում բաժանաչափ բնական հարստութիւններ, — յերկաթահանք, ածուխ, նավթ, հաց, բամբակ: Դրանք կան արդյոք մեզանում: Կան: Կան աճելի, քան մի վորեւե ուրիշ յերկրում: Վերցնենք թեկուզ Ուրալը, վորը ներկայացնում է հարստութիւնների մի այնպիսի կոմբինացիա, վորպիսին չի կարելի գտնել և վոչ մի յերկրում: Հանք, ածուխ, նավթ, հաց, ինչ ասես, վոր չկա Ուրալում: Մեր յերկրում կա ամեն ինչ, բացի սոսկ կուռչուկից: Բայց մեկ — յերկու տարուց հետո մենք մեր տրամադրութեան տակ կառուցուկ ել կունենանք: Այս կողմից, բնական հարստութիւնների կողմից մենք լիովին ապահովված ենք: Դրանք մեզանում ավելի յեն, քան պետք է:

Ել ինչ է պահանջվում

Պահանջվում է այնպիսի իշխանութեան գոյութիւն, վորը ցանկութիւն յեմ ուժ ունենա այդ հսկայական բնական հարստութիւնների ոգտագործումն առաջ մղել հոգուս ժողովրդի: Կան արդյոք մեզանում այդպիսի իշխանութիւն: Կա: Ճիշտ է, բնական հարստութիւնների ողտադործման ասպարեղում մեր աշխատանքը միշտ չի ընթանում առանց մեր աշխատողների միջև տարաձայնութիւնների: Որինակ, անցյալ տարի

խորհրդային իշխանութիւնը վորոշ չափով պայքար մղեց ածխամետաղարդիւնաբերական այն յերկրորդ բաժայի կազմակերպման հարցի շուրջը, առանց վորի մենք այլևս չենք կարող զարգանալ: Բայց մենք արդեն հաղթահարել ենք այդ խոչընդոտները: Մեզանում ևս շուտով կլինի այդ բազան:

Ուրիշ ել ինչ է պահանջվում:

Պահանջվում է նաև, վորպեսզի այդ իշխանութիւնն ողտով բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների աջակցութեամբ: Արդյոք մեր իշխանութիւնն ողտովում է այդպիսի աջակցութեամբ: Այո, ողտում է: Ամբողջ աշխարհում դուք չեք գտնի ուրիշ այնպիսի իշխանութիւն, վորն ողտվեր բանվորների ու գյուղացիների այնպիսի աջակցութեամբ, ինչպես խորհրդային իշխանութիւնը: Ձեմ մատնանշի սոցիալիստական մրցման աճի փաստերը, հանդիպական արդիւնաւանի համար մղվող պայքարի կամպանիան: Այդ բոլոր փաստերը, վորոնց մեջ պարզորոշ յերևում է միլիոնավոր մասսաների աջակցութիւնը խորհրդային իշխանութեան, — հանրահայտնի յեն:

Այլևս ինչ է պետք, վորպեսզի կարողանանք կատարել ու գերակատարել 1931 թվականի ստուգիչ թվերը:

Հարկավոր է նաև այնպիսի իրավաւարդի գոյութիւն, վորը զերծ լինի կապիտալիզմի անբուժելի հիվանդութիւններից և վորը լուրջ առավելութիւն ունենա կապիտալիզմի հանդեպ: Ճշմարտութեամբ, գործադրութիւնը, վատումը, լայն մասսաների աղքատութիւնը — ահա կապիտալիզմի անբուժելի հիվանդութիւնները: Մեր իրավակարգը չի տառապում այդ հիվանդութիւններով, վորովհետև իշխանութիւնը մեր ձեռքում է, բանվոր դասակարգի ձեռքում, վորովհետև մենք արում ենք պլանային տնտեսութիւն, պլանաչափ կերպով

կուսակում ենք ռեսուրսները և նրանց ճիշտ ենք բաշխում ըստ ժողովրդական տնտեսութեան ճյուղերի: Մենք գերծ ենք կապիտալիզմի անբուժելի հիվանդութեան շրջանում: Նրանք մենք տարբերվում, դրանում և մեր վճռական առավել- լութեանը կապիտալիզմի հանդեպ: Նայեցեք, թե կապիտա- լիստներն ինչպես են ուզում դուրս գալ ճշմարտամից: Նրանք ամենամեծ չափով իջեցնում են բանվորների աշխատավար- ձը: Նրանք ամենամեծ չափով իջեցնում են հումուլթի և պարենային մթերքների գները: Բայց նրանք չեն ուզում գեթ վորևէ լուրջ կերպով իջեցնել արդյունաբերական ապ- բանքների գները: Այդ նշանակում է, վոր նրանք ուզում են ճգնաժամից՝ դուրս գալ ի հաշիվ ապրանքների հիմնական ըս- պառողների, ի հաշիվ բանվորների, ի հաշիվ գյուղացիների, ի հաշիվ այն յերկրների աշխատավորների, վորոնք հու- մուլթ և պարեն են արտադրում: Կապիտալիստները կորում են այն վոստը, վորի վրա իրենք են նստած: Յեւ ճգնաժա- մից յերնելու փոխարեն ստացվում է այդ ճգնաժամի խորա- ցումը, առաջ է գալիս այն նոր նախադրյալների կուտա- կում, վորոնք տանում են դեպի նոր, ավելի՛ ևս դաժան ճգնաժամ: Մեր առավելութունը կայանում է նրանում, վոր մենք չունենք գերաբարձրութեան ճգնաժամեր, մենք չու- ենք արտադրութեան մեջ անարխիա, վորովհետեւ պլանա- յին տնտեսութուն ենք վարում: Բայց այդ դեռ բոլորը չէ: Մենք ամենակենսարոնացած արդյունաբերութեան յերկիրն ենք: Այդ նշանակում է, վոր մենք կարող ենք մեր արդյու- նաբերութեանը կառուցել ամենալավ տեխնիկայի հիմունք- ներով և դրա շնորհիվ ապահովել աշխատանքի չտեսնված արտադրողականութունը, կուտակման չտեսնված տեմպը: Անցյալում մեր թուլութունն այն է յեղել, վոր այդ ար- դյունաբերութունը հիմնվել է գյուղացիական ջլատված ու

մանր տնտեսութեան վրա: Մակայն այդ յեղել է անցյալում: Հիմա այդ արդեն չկա: Վաղը, դուցի մեկ տարուց հետո, մենք կդառնանք աշխարհումս ամենախոշոր գյուղատնտե- սութեան յերկիր: Սովխոզներն ու կոլխոզները— իսկ սրանք հանդիսանում են խոշոր տնտեսութեան ձևեր— արդեն այս տարի ավելի մեր ամբողջ ապրանքային հացահատիկի կեսը: Իսկ այս նշանակում է, վոր մեր իրավակարգը, խորհրդա- յին իրավակարգը, տալիս է արագ առաջընթացի այնպիսի հնարավորութեաններ, վորոնց մասին չի կարող յերազել և վոչ մի բուրժուական յերկիր:

Ինչ է այլևս պահանջվում նրա համար, վորպեսզի 7 մղոնանոց քայլերով շարժվել առաջ:

Պահանջվում է բանվորական միաձուլված յեւ միասնա- կան կուսակցութեան գոյութուն, նրա համար, վորպեսզի բան- վոր դասակարգի բոլոր լավագույն մարդկանց ճիգերը ուղղվի դեպի մի կետ, բավականաչափ վորձված կուսակցութեան, նրա համար, վորպեսզի կանգ չառնի դժվարութեանների հանդեպ և սխտեմատիկորեն կենսագործե ուղիղ, հեղափո- խական, լրոշիկիյան քաղաքականութեան: Արդյոք մեզա- նում կա այդպիսի կուսակցութեան: Այո, կա: Արդյոք ճիշտ է նրա քաղաքականութեանը: Այո, ճիշտ է, վորովհետեւ նա լուրջ հաջողութեաններ է տալիս: Այս բանն այժմ խոստո- վանում են բանվոր դասակարգի վոչ միայն բարեկամները, այլ և թշնամիները: Նայեցեք, թե մեր կուսակցութեան դեմ ինչպես են վոռնում ու կատաղում բոլորին հայտնի, «հար- գելի» ջենտլմենները— Ֆիշը՝ Ամերիկայում, Չերչիլը՝ Անգլիա- յում, Պուանկարեն՝ Ֆրանսիայում: Ինչո՞ւ յեն նրանք վոռ- նում ու կատաղում: Վորովհետեւ մեր կուսակցութեան քա- ղաքականութեանը ճիշտ է, վորովհետեւ նա տալիս է հաջո- ղութեան հաջողութեան յետևից:

Ահա, ընկերներ, այն բոլոր հնարավորությունները, վորոնք մեզ համար հեշտացնում են 1931 թվականի ստուգելի թվերի իրադրծումը, վորոնց շնորհիվ կարելի յե հընդամյակը կատարել 4, իսկ վճռողական ճյուղերում—նույնիսկ 3 տարում:

Այսպիսով պէանը կատարելու համար առաջին պայմանը—«որեկալով» հնարավորությունները կան մեղանում:

Կո արդյոք յերկրորդ պայմանը—այդ հնարավորություններն ոգաագործելու կարողությունը: Այլ կերպ ասած՝ կո արդյոք մեղանում ֆարրիկաների, գործարանների, հանքահորերի ճիշտ ղեկավարություն: Արդյոք այստեղ ամեն ինչ հաջողակ է:

Իժբախտաբար այստեղ ամեն ինչ հաջողակ չե: Յեվ մենք, վորպես բոլշեիկներ, այդ պետք ե ասենք ուղղակի ե բացահայտ կերպով:

Իհնչ ե նշանակում ղեկավարել արդյունաբերությունը: Մեղանում վնչ միշտ բոլշեիկորեն են նայում ձեռնարկությունների ղեկավարման հարցին: Մեղանում հաճախ մտածում են, վոր ղեկավարել—այդ նշանակում ե թղթեր ստորագրել: Այդ ցավալի յե, բայց փաստ ե: Յերբեմն ակամայից հիշում ես Շչեգրինի պոմպագուրներին:

Հիշում եք ինչպես պոմպագուր—կինը սովորեցնում եր յերիտապարզ պոմպագուրին—գլուխ մի ցավեցնի ղիտության վրա, մի խորացի գործի մեջ, թող ուրիշներն ղբաղվեն ղրանով, այդ քո գործը չե,—քո գործն ե ղեկավարել, թղթեր ստորագրել: Պետք ե խոստովանել, ի ամոթ մեզ, վոր մեր, բոլշեիկներն մեջ ես քիչ չեն այնպիսիները, վորոնք ղեկավարում են թղթեր ստորագրելու միջոցով: Իսկ ղործի մեջ թափանցելու, տեխնիկային տիրապետելու, ղործի տերը ղառնալու ուղղությամբ—վոչինչ:

Ինչպես կարող եր պատահել, վոր մենք, բոլշեիկներ, կատարելով յերեք հեղափոխություն, հաղթանակով գուրս դալով ղաժան քաղաքացիական կռիլից, լուծելով արդյունաբերության ստեղծման խոշորագույն խնդիրը, գյուղացիությանը ղարձնելով ղեպի սոցիալիզմի ուղին,—այդ ինչպես կարող եր պատահել, վոր արդյունաբերության ղեկավարման գործում մենք խոնարհվում ենք թղթի առաջ:

Այստեղ պատճառը կայանում ե նրանում, վոր թուղթն ստորագրելն ավելի հեշտ ե, քան թե արտադրությունը ղեկավարելը: Յեվ ահա շատ տնտեսավարներ գնացին ամենասակավ ղիմադրության այդ գծով: Այստեղ կա նաե մեր մեղքը, կենտրոնի մեղքը: Տասը տարի առաջ տրվեց լուղունգ՝ «քանի վոր կոմունիստները ղեռ ինչպես պետք ե չեն հասկանում արտադրության տեխնիկան, քանի վոր նրանք ղեռն պիտի սովորեն տնտեսություն կառավարել, սպա թող հին տեխնիկներն ե ինժեներները, մասնագետները վարեն տնտեսությունը, իսկ ղուք, կոմունիստները, մի խառնվեք ղործի տեխնիկային, սակայն, չխառնվելով, ուսումնասիրեցեք արդյունաբերությունը կառավարելու ղիտությունը, առանց ձեռներդ ձալելու, վորպեսդի հետո միդ հավատարիմ մասնագետների հետ միասին ղառնաք արտադրության իսկական ղեկավարներ, ղործի իսկական տերեր»: Այդպես եր լուղունգը: Իսկ ինչ ղուրս յեկավ իրականում: Այդ ֆորմուլայի 2-րդ մասը մի կողմ շարտեցին, քանի վոր սովորել ավելի գժվար ե, քան թղթեր ստորագրել, իսկ ֆորմուլայի առաջին մասը գոհակացրին, ղործին չխառնվելը մեկնաբանելով իբր հրաժարիմք արտադրության տեխնիկայի ուսումնասիրությունից: Ստացվեց մի անհիթթություն, վնասակար ե վտանգավոր անհիթթություն, վորից վորքան շուտ ազատվենք, այնքան լավ:

Ինքը կյանքը հաճախ ազդանշան է ավել մեղ այս գործում յեղած անհաջողակ դրուժյան մասին: Շախտի գործն առաջին ազդանշանն էր: Շախտի գործը ցույց տվեց, վոր կուսակազմակերպություններում ու արհմիություններում պակասում էր հեղափոխական արթնությունը: Նա ցույց տվեց, վոր մեր տնտեսավարներն անտանելիորեն յետ են մնացել տեխնիկայի ասպարիզում, վոր մի քանի հին ինժեներներ ու տեխնիկներ, աշխատելով առանց վերահսկողության, ավելի հեշտությամբ են զբոլում զեպի ֆլաստարության ուղին, ժանավանդ վոր նրանց զուխն անընդհատ տանում են արտասահմանում գտնվող թշնամիներն իրենց «առաջարկներով»: Յերկրորդ ազդանշանն «արդևուսակցության» դատարությունն էր:

Իհարկե ֆլաստարության հիմքը դասակարգային պայքարն է: Իհարկե դասակարգային թշնամին կատաղաբար զիմադրում է սոցիալիստական հարձակման: Սակայն միայն այդ բավական չէ ֆլաստարության այգալիսի փարթամ ծաղկումը բացատրելու համար:

Խնչպես կարող էր պատահել, վոր ֆլաստարությունն այգալիսի լայն չափեր ընդունեց: Ո՞վ է մեղավոր դրանում: Մենք ենք մեղավոր: Յեթե մենք տնտեսության ղեկավարման գործն այլ կերպ գնեցինք, յեթե մենք ավելի վաղ անցած լինեցինք գործի տեխնիկայի ուսումնասիրության, յեթե մենք ավելի հաճախ և խոհեմաբար միջամտեցինք տնտեսության ղեկավարման, ֆլաստարներին չէր հաջողվի այգալիս շատ ֆլաստ տալ:

Պետք է ինքներս դառնանք մասնագետներ, գործի տերեր, պետք է յերեսով դառնանք ղեպի տեխնիկական գիտությունները—ահա ուր էր մղում մեղ կյանքը: Քայց վոչ առաջին և վոչ յերկրորդ ազդանշանը դեռ չեն

ապահովել անհրաժեշտ շրջադարձը: Ժամանակ է, վաղուց ժամանակ յերեսով դառնալ ղեպի արտադրություն: Ժամանակ է, վոր դեն շարտենք հին լողունը, անցած լողունը՝ տեխնիկային չխառնվելու մասին և ինքներս դառնանք մասնագետներ, գործի գիտուններ, ինքներս դառնանք գործի լիակատար տերեր:

Հաճախ հարցնում են՝ ինչո՞ւ մեղ մոտ չկա միավարություն: Այդ չկա և չի լինի, քանի դեռ մենք չենք տիրապետել տեխնիկային. քանի դեռ մեր մեջ, բոլշևիկներին մեջ չի լինի այնպիսի մարդկանց բավականաչափ քանակություն, վորոնք լավ ծանոթ լինեն տեխնիկայի, եկոնոմիկայի և ֆինանսների հարցերին, մեղ մոտ չի լինի իսկական միավարություն: Խնչքան կուղեք բանաձևեր գրեցեք, ինչ խոսքերով կուղեք յերգվեցեք, բայց յեթե չտիրապետեք գործարանի, ֆաբրիկայի, հանքահորի տեխնիկային, եկոնոմիկային, ֆինանսներին, բան չի դուրս գալ միավարություն չի լինի: Խնչիրն ուրեմն կայանում է նրանում, վորպեսզի մենք ինքներս տիրապետենք տեխնիկային, ինքներս դառնանք գործի տերեր: Միայն դրանումն է յերաշխիքը, վոր մեր պլանները լիաչափ կկատարվեն և միավարությունը կըկերտվի:

Այդ գործն իհարկե հեշտ չէ, բայց միանգամայն հաղթահարելի յէ: Գիտությունը, տեխնիկական փորձը, գիտելիքներն—այս ամենը ձեռք բերվող բան է: Այսոր նրանք չկան, իսկ վաղը կլինեն: Գլխավորն այստեղ այն է, վորպեսզի ունենալ տեխնիկային տիրապետելու, արտադրության գիտությանը տիրապետելու բոլշևիկյան ջերմ ցանկություն: Ջերմ ցանկության ղեպքում կարելի յէ հաջողեցնել ամեն ինչ, կարելի յէ հաղթահարել ամեն բան:

Յերեմն հարցնում են, չի՞ կարելի արդյոք մի փոքր

դանդաղեցնել տեմպերը, չափավորել շարժումը: Վոչ, չի կարելի, ընկերներ: Ձի կարելի իջեցնել տեմպերը: Ընդհակառակը, ինչքան ուշժ սև հնարավորութիւնն է, պետք է ավելացնել նրանց: Այդ են պահանջում մեզնից ԽՍՀՄ բանվորների ու գյուղացիների հանդեպ մեր պարտավորութիւնները: Այդ են պահանջում մեզնից ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի հանդեպ վերցրած մեր պարտավորութիւնները:

Դանդաղեցնել տեմպերը—այդ նշանակում է յետ մնալ: Իսկ յետ մնացողներին հարվածում են: Բայց մենք չենք ուզում հարվածոված լինել: Վոչ, չենք ուզում: Հին Ռուսաստանի պատմութիւնն է միջի աշխարհ կայանում է նրանում, վոր նրան անընդհատ հարվածում էյին յետամնացութեան պատճառով: Հարվածում էյին մոնղոլական խաները: Հարվածում էյին թուրքական բեկերը: Հարվածում էյին շվեդական ֆեոդալները: Հարվածում էյին լեհ-լիտվական պաները: Հարվածում էյին անգլո-ֆրանսիական կապիտալիստները: Հարվածում էյին յապոնական բարոնները: Հարվածում էյին ըողորը— յետմնացութեան համար: Ռազմական, կուլտուրական, պետական յետամնացութեան համար, արդյունաբերական, գյուղատնտեսական յետամնացութեան համար: Հարվածում էյին, վորովհետև այդ յեկամտաբեր եր և անցնում եր անպատիժ: Հիշեցեք մինչհեղափոխական բանաստեղծի խոսքերը.— «Դու և խեղճ, դու և առատ, դու և հզոր, դու և անուշտ մայր Ռուսիա»: Հին բանաստեղծի այդ խոսքերը լավ էյին սերտել հիշյալ պարոնները: Նրանք խփում էյին և ասում.— «Դու առատ», ուրեմն քո հաշիին կարելի յե ապրել: Նրանք խփում էյին և ասում.— «Դու խեղճ և անուշտ».— հետևապես կարելի յե անպատիժ կերպով հարվածել և կողոպտել քեզ: Այսպես է շահագործողների որենքը— հարվածել յետ մնա-

ցածներին և թուլերին: Կապիտալիզմի՝ դաշի որենք: Դու յետ յետ մնացել, դու թուլ ես, ուրեմն դու իրավացի չես, ուրեմն քեզ կարելի յե հարվածել և ստրկացնել: Դու ուժեղ ես— ուրեմն իրավացի յես, հետևապես քեզանից պետք է պոռնալար: Ահա թե ինչու մենք այլևս չենք կարող յետ մնալ:

Անցյալում մենք չունեյինք և չեյինք կարող ունենալ հայրենիք: Բայց այժմ, յերբ մենք տապալել ենք կապիտալիզմը, իսկ իշխանութիւնը մեզանում բանվորական է, — մենք ունենք հայրենիք և մենք պիտի պաշտպանենք նրա անկախութիւնը: Ուզում եք արդոք, վոր մեր սոցիալիստական հայրենիքը հարվածվի և կորցնի իր անկախութիւնը: Բայց յեթե այդ չեք ուզում, դուք պետք է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնեք նրա յետամնացութիւնը և բոլշեիկյան իսկական տեմպեր զարգացնեք նրա սոցիալիստական տնտեսութեան շինարարութեան գործում: Ուրիշ հանապարհներ չկան: Ահա թե ինչու Լենինն ասում եր Հոկտեմբերի ժամանակ.— «Կամ մահ, կամ հաւանք և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներից»:

Առաջավոր յերկրներից մենք յետ ենք մնացել 50 — 100 տարով: Այդ տարածութիւնը մենք պետք է անցնենք տասը տարում: Կամ մենք կանցնենք, կամ մեզ կհղմեն:

Ահա թե ինչ են թելադրում մեզ ԽՍՀՄ բանվորների ու գյուղացիների առջև մեր ստանձնած պարտավորութիւնները:

Բայց մենք ունենք ուրիշ, ավելի լուրջ և ավելի կարևոր պարտավորութիւններ: Դրանք համաշխարհային պրոլետարիատի հանդեպ մեր ստանձնած պարտավորութիւններն են: Նրանք զուգադիպում են առաջին տեսակի պարտավորութիւններին: Բայց նրանց մենք ավելի բարձր ենք

դատում: ԽՍՀՄ բանվոր դասակարգը համաշխարհային բան-
վոր դասակարգի մի մասն է: Մենք հաղթեցինք վոչ մի-
այն ԽՍՀՄ բանվոր դասակարգի ջանքերով, այլ և համաշ-
խարհային բանվոր դասակարգի աջակցութեան շնորհիվ:
Առանց այդպիսի աջակցութեան մեզ վաղուց կհաջանարե-
լին: Ասում են, վոր մեր յերկիրը հանդիսանում է բոլոր
յերկրների պրոլետարիատի հարվածային բրիգադան: Այդ
լավ է ասված: Բայց այդ մեզ վրա դնում է ամենալուրջ
պարտավորութիւններ: Հանուն ինչի՞ յե աջակցում մեզ
միջազգային պրոլետարիատը, ինչո՞վ ենք մենք արժանա-
ցել այդպիսի աջակցութեան: Նրանով, վոր մենք առաջինն
ենք նետվել կովի ընդդէմ կապիտալիզմի, մենք առա-
ջինն ենք սահմանել բանվորական իշխանութիւն, մենք
առաջինն ենք սկսել սոցիալիզմ կառուցել: Նրանով, վոր
մենք անում ենք մի գործ, վորը հաջողութեան դեպքում
շուտ կտա ամբողջ աշխարհը և կազատագրի ամբողջ բան-
վոր դասակարգին: Իսկ ի՞նչ է պահանջվում հաջողութեան
համար: Մեր յետամնացութեան վերացում, շինարարութեան
բարձր, բոլշեիկյան տեմպերի զարգացում: Մենք պետք է ա-
ռաջ շարժվենք այնպես, վորպէսզի ամբողջ աշխարհի բան-
վոր դասակարգը, նայելով մեզ, կարողանա ասել,—ահա նա,
իմ առաջավոր ջոկատը, հիմա նա, իմ հարվածային բրիգա-
դան, հիմա նա, իմ բանվորական իշխանութիւնը, հիմա նա,
իմ հայրենիքը,—նրանք անում են իրենց գործը, մեր գոր-
ծը, լավ է, աջակցենք նրանց ընդդէմ կապիտալիստների և
ծավալներ համաշխարհային հեղափոխութեան գործը: Պէտք
է արդոք մենք արգարացնենք համաշխարհային բանվոր
դասակարգի հուշերը, կատարենք նրա հանդեպ մեր պար-
տավորութիւնները: Այո, պետք է, յեթե չենք ուզում վեր-
ջում արատավորվել:

Սրանք են մեր ներքին ու միջազգային պարտավո-
րութիւնները: Դուք տեսնում եք, վոր նրանք մեզ բոլշեիկ-
յան տեմպեր են թելադրում:

Ձեմ ասի, վոր տնտեսութեան ղեկավարման վերաբեր-
մամբ մեղանում այս տարիներում վոչինչ չի արված: Արված
է և նույնիսկ շատ բան: Արդյունաբերութեան արտադրան-
քը մենք կրկնապատիկ ավելացրել ենք նախապատերազմ-
յանի համեմատութեամբ: Մենք ստեղծել ենք աշխարհում ա-
մենախոշոր գյուղատնտեսական արտադրութիւն: Բայց մենք
կարող եյինք անել ավելին, յեթե այդ ժամանակվա ընթաց-
քում աշխատեցինք ինչպէս պետք է տիրապետել արտա-
դրութեան, նրա տեխնիկային, նրա ֆինանսական—տնտե-
սական կողմին:

Ամենաշատը տասը տարում մենք պետք է անցնենք
այն տարածութիւնը, վորով մենք յետ ենք մնացել կապի-
տալիզմի առաջավոր յերկրներից: Դրա համար մեղանում
կան բոլոր «ոքեիկաիկ» հնարավորութիւնները: Պակասում
է միայն այդ հնարավորութիւններն ըստ հարկին ոգտա-
գործելու կարողութիւնը: Իսկ այդ կախված է մեզանից:
Միայն մեզանից: Ժամանակ է, վոր մենք սովորենք ոգտա-
գործել այդ հնարավորութիւնները: Ժամանակ է վերջ
տալ արտադրութեանը չխառնվելու փթած դրույթին: Ժա-
մանակ է յուրացնել ուրիշ, նոր, այժմյան ժամանակաշրջ-
անին համապատասխանող դրույթ,—խառնվիր ամեն ինչի:
Յեթե գործարանի վերատեսուչ էս,—խառնվիր բոլոր գոր-
ծերին, թափանցիր ամեն ինչի մեջ, վոչինչ մի անտեսիր, սո-
վորիք և նորից սովորիր: Բոլշեիկները պետք է տիրապե-
տեն տեխնիկային: Ժամանակ է, վոր բոլշեիկներն իրենք
դառնան մասնագետներ: Վերակառուցման շրջանում տեխ-
նիկան վճռում է ամեն ինչ: Յեթե անտեսաւարը, վորը

59672-66

ВИБРАТОР
ИЛИ
ДВИГАТЕЛЬ
А...

ЗУБН-Арм.ССР

չի ցանկանում ուսումնասիրել տեխնիկան, չի ցանկանում տիրապետել տեխնիկային, նա անեկդոտ է և վոչ թե տնտեսավար:

Ասում են թե դժվար է տիրապետել տեխնիկային: Ճիշտ չէ: Չկան այնպիսի ամրոցներ, վորոնք չկարողանան վերցնել բոլորիկները: Մենք լուծեցինք մի շարք դժվարագույն խնդիրներ: Մենք տապալեցինք կապիտալիզմը: Մենք վերցրինք իշխանությունը: Մենք կառուցեցինք խոշորագույն սոցիալիստական խնդուտրիան: Մենք միջակին դարձրինք դեպի սոցիալիզմի ճանապարհը: Շինարարության տեսակետից ամենակարևորը մենք արդեն արեցինք: Մեզ քիչ բան մնաց անելու.— ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտություն: Յեվ յերբ մենք այդ կանենք, մեղանում կլինեն այնպիսի տեմպեր, վորոնց մասին մենք այժմ յերազեկ անգամ չենք կարող: Յեվ մենք այդ կանենք, յեթե ինչպես հարկն է այդ ցանկանանք:

2. ՆՎԱՃԵԼ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ Ա Մ Ր Ո Յ Ը

ՀամԿՅԵՄ ԿԿ-ի բյուրոյի յեվ Մոսկվայի կոմիսեյի, «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի խմբկոլեգիայի, ՀԼԿՅԵՄ Ասալինյան ՌԿ-ի, Ելեկտրոգործարանի բանվորների ու կոմյեիսականների միացյալ նիստի վորոշումը

Լենինյան կուսակցության ղեկավարությունը ծավալելով սոցիալիստական հարձակումը, բանվոր դասակարգը ձեռք բերեց վճռողական հաջողություններ սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում: Արդյունաբերության բնագավառում անդարձորեն վճռված է «ով ում» հարցը: Անդարձորեն վճռված է հնգամյակը չորս տարում կատարելու

հարցը: Համատարած կոլեկտիվացման հիմունքով կուլակը վերացվում է իբր դասակարգ: Այս ամենը կուսակցությունը հաջողեցրեց բոլոր տեսակի ոպորտունիստների դեմ պայքարելով, ալ և «ձախ» ուկրոնիստների դեմ պայքարելով:

«Մենք լուծեցինք մի շարք խոշորագույն խնդիրներ: Մենք վերցրինք իշխանությունը: Մենք միջակին դարձրինք դեպի սոցիալիզմի ճանապարհը: Շինարարության տեսակետից ամենակարևորը մենք արդեն արեցինք: Մեզ քիչ բան մնաց անելու.— ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտության և յերբ մենք այդ կանենք, այն ժամանակ մեղանում կլինեն այնպիսի տեմպեր, վորոնց մասին մենք այժմ յերազեկ անգամ չենք կարող» (Ստալին):

ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖՐՈՆՏԸ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԲԱՐԻ Ֆ Ր Ո Ն Տ Ե

Դիմադրելով սոցիալիստական հաղթական հարձակման, թշնամին գործում եր ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավառներում,

Սոցիալիստական հարձակման ընթացքում, վորը մեր յերկրում առաջ եր բերում դասակարգային պայքարի սրում, պրոլետարիատը հայտնաբերեց փաստարար կազմակերպությունների մի ամբողջ ցանց: Զարգված է Կոնդրատեի ու Զայանովի կուլակային «աշխատավորական կուսակցությունը»: Զարգված է «արդկուսակցությունը», շարգված է Գրոմանի ու Սուխանովի մենշեիկյան կազմակերպությունը, դնդակահարված են քաղցի 48 կազմակերպիչները:

«Յեթե մենք տնտեսության ղեկավարման գործն այլ կերպ ղենեյինք, յեթե մենք ավելի շուտ անցնե-

յինք գործի տեխնիկայի ուսումնասիրութեան, գիտութեան տիրապետութեան, յեթե մենք ավելի հաճախ և խոհեմաբար միջամտելինք տնտեսութեան ղեկավարման,— ֆլասարարներին չեր հաջողվի այդքան շատ ֆլասել» (Ստալին)։

Այստեղից բխում է այն գլխավոր խնդիրը, վոր կուսակցությունը դրել է բանվոր դասակարգի առաջ.—

«ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԵՏԻ ՏԻՐԱՊԵՏՆԵՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԵԽՆԻԿԱՆ ՎՃՌՈՒՄ Ե ԱՄԵՆ ԻՆՉ»։

Ինչպես պիտի մենք, յերկասարդ բոլշևիկներս, կուսակցութեան ղեկավարութեամբ տիրապետենք տեխնիկային. ինչպես պիտի մենք, սոցմրցութեան ու հարվածայնութեան հիմունքով, դառնանք մասնագետներ, ինչպես պիտի լուծենք ամենաշատը 10 տարում առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու խնդիրը։

Դրա համար մենք պետք է «գիտւթյան և կապիտալիստական տեխնիկայի վերջին խոսքը միացնենք գիտակից աշխատողների մասսայական միութեան հետ, վորոնք ստեղծում են սոցիալիստական խոսքը սոցիալիստական» (Լենին)։ Միայն այդ կերպ առաջ շարժվելով, միայն միացնելով կապիտալիստական տեխնիկայի վերջին նվաճումներն աշխատանքի սոցիալիստական կազմակերպման հետ,— մենք կկարողանանք ստեղծել նոր տեխնիկա, ավելի բարձր, քան կապիտալիզմի ժամանակ, մենք կկարողանանք իրացնել շինարարութեան բոլշևիկյան տեմպերը, մենք կկարողանանք 10 տարում հասնել և անցնել կապիտալիստական յերկրներին։

«Գիտութեանը, տեխնիկական փորձը, գիտելիքներն— այդ ամենը ձեռք բերվող բան է։ Այսօր նրանք չկան, իսկ վաղը կլինեն։ Այստեղ գլխավորը կախնում

է նրանում, վորպեսզի ունենանք տեխնիկային տիրապետելու, արտադրութեան գիտութեանը տիրապետելու բոլշևիկյան վառ ցանկութեան։ Վառ ցանկութեան ղեկավարում կարելի չի ձեռք բերել ամեն ինչ, կարելի չի հաղթահարել ամեն բան» (Ստալին)։

Սովորելու, ամեն ինչ ձեռք բերելու, ամեն բան հաղթահարելու այդ ջերմ ցանկութեանը կա մեղանում, բանվոր-գյուղացիական յերիտասարդութեան, կոմյերիտականների մեջ։

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՄԵՆՔ ԱՅՆՊԵՍ, ՎՈՐՊԵՍՋԻ ԱՄԵՆ ՄԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԱՄԵՆ ՄԻ ԲՁԻՁ ԳԼԽԱՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՅԴ ԶԳՏՈՒՄԸ ԴԵՊԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԵՊԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ։

Համկիցեմ 7-րդ համադրումարում ընկեր Ստալինն ամբողջ կոմյերիտականները գիմեց հետևյալ խոսքերով.—

«Մեր առջև կանգնած է մի ամբողջ նա, այդ ամբողջը կոչվում է գիտութեան, իր գիտելիքների բազմաթիվ ուղեբերով։ Այդ ամբողջը պետք է վերցնել ինչ կերպ էլ լինի։ Այդ ամբողջը պետք է վերցնեն յերիտասարդությունը, յերե նա ուզում է լինել նոր կյանքի կառուցող, յերե նա ուզում է դառնալ նիւ գլխադիայի իսկական փոխարինողը»։

Մենք գրավել ենք այդ ամբողջի միայն մի քանի, չնչին ամբողջությունները։

Հնգամյակի յերրորդ, վճռական տարում մենք պետք է ծավալված ֆրոնտով զրոհենք նրա վրա։

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե արդյունաբերութեան հիմնական ճյուղերում հնգամյակը կատարենք յերեք տարում։

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե աշխատանքի արտադրողականութեան

նը բարձրացնենք 28 տոկոսով, ինքնարժեքն իջեցնենք 10 տոկոսով, տանք արդյունաբերական արտադրանքի 45 տոկոս աճում, նշանակալից չափով բարձրացնելով այդ արտադրանքի վերակը:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե այս տարի աշխատանքի գցենք 518 նոր ձեռնարկություններ:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե հնգամյակի յերրորդ տարում կուեկտիվացնենք գյուղացիական անտեսությունների վոչ պակաս, քան 50 տոկոսը և գյուղատնտեսությունը հիմնավորենք կայուն տեխնիկական բաղալով:

Սոցիալիստական շինարարության բոլշեիկյան տեմպերըն այժմ վճռվում են տեխնիկային տիրապետելու ֆրոնտում:

«Մենք առաջավոր յերկրներից յետ ենք ֆնացել 50—100 տարով: Մենք այդ տարածությունը պիտի անցնենք 10 տարում: Կամ մենք կանցնենք, կամ մեզ կձգմեն» (Ստալին):

ՄԵՁ ՁԵՆ ՃԶՄԻ,

յեթե ամբողջ բանվոր դասակարգը, յեթե ամբողջ աշխատավոր յերիտասարդությունը տեխնիկայի յուրացման գործը համարի իր հարազատ գործը, իր դասակարգային պարտականությունը:

ՄԵՁ ՁԵՆ ՃԶՄԻ,

յեթե մենք պրոլետարական ղեկառնողության թշնամիների դուրս շարտենք ժողովրդական անտեսության բոլոր մասերից, գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավառներից:

ՄԵՁ ՁԵՆ ՃԶՄԻ,

յեթե մենք ամենամոտ ամիսներում ու տարիներում բան-

վոր դասակարգի ժարդկանցից առաջ քաշենք հարյուր հազարավոր մասնագետներ, յեթե մենք ամբողջ բանվոր դասակարգն սպառազինենք արտադրության գիտությամբ:

ՄԵՁ ՁԵՆ ՃԶՄԻ,

յեթե մենք իրացնենք ՀամԼԿՅՅՄ 9-րդ համադրմարի վորոշումները՝ աշխատավոր յերիտասարդության, առաջին հերթին բանվոր յերիտասարդության ընդհանուր պոլիտեխնիկական ուսման մասին:

ՄԵՁ ՁԵՆ ՃԶՄԻ,

յեթե մենք ամբողջ արտադրական պրոդազանդան, մեր ամբողջ կուլտուրական աշխատանքը կառուցենք բոլոր բնագավառներում տեխնիկային տիրապետելու հիմունքով:

Տիրապետել տեխնիկային, այդ նշանակում է լիազարկապահովել արդֆինալանի քանակային ու վորակային ցուցանիշները. տիրապետել տեխնիկային, այդ նշանակում է վերադարձնել յերկրին հնգամյակի առաջին տարիներում չստացված 1 միլիարդ ու, վորը մենք կորցրել ենք ինքնարժեքի իջեցման պլանները թերակատարելու, արդյունաբարտադրանքի քանակական աճման և նրա վորակային ցուցանիշների միջև յեղած ձեղքի հետևանքով. տիրապետել տեխնիկային, այդ նշանակում է պայքարել ժողովրդական անտեսության բոլոր բնագավառներում մեքենայացման և ռացիոնալացման համար, այդ նշանակում է պայքարել վատելիքը, հումուլթը և բանվորական ուժը վատնելու դեմ. տիրապետել տեխնիկային, այդ նշանակում է լիովին կիրառել բոլոր ներքին ռեսուրսների մոբիլիզացիան, կահավորանքի լիակատար բեռնվածությունը, բանվորական մասսաների ստեղծագործական նախաձեռնության լիազարկ ոգտագործումը, այդ նշանակում է լիովին իրացնել բոլոր արժեքավոր բանվորական առա-

Չարկներն ու գյուտերը, տիրապետել տեխնիկային այդ նշանակումն է ավելի ևս ամրապնդել մեր յերկրի պաշտպանողական ունակութիւնը, տիրապետել տեխնիկային, այդ նշանակումն է սոցիալիստական պլանավորման գործը մատչելի դարձնել միլիոններին, այդ նշանակումն է պլանավորման գործը դնել այնպես, վոր պլանը Պետպլանից մինչև դադգյան և դադգյանից մինչև Պետպլանի դառնա մի հոգի դենք ժողովրդական տնտեսութեան վորոշիչ բնագավառներում հնգամյակը 3 տարում կատարելու պայքարում. տիրապետել տեխնիկային, այդ նշանակումն ժողովրդական տնտեսութեան աճմանը համապատասխան՝ ամենամեծ չափով լայնացնել Ֆարգործուի, ՖԳՄ-ների ու բանվոր պատանեկութեան դպրոցների, գործարան—ԲՏՈՒՀ-ների ու ուսումնական կոմբինատների ցանցը:

ՀԱՄԼԿՅՅԵՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ, ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՎ «ԿԱՐՄԻՐ ՊՈՒՏԻԼՈՎՅԻ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՅԵՎ ՆԻԺԵԳՈՐՈՂԻ ԱՎՏՈՇԵՆԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅԱՆ, ԿՈՉ Ե ԱՆՈՒՄ ԱՄԲՈՂԷ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆԸ՝ ՇԱՐԺՎԵԼ ՀԱՌԱՋ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՄՐՈՅԸ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՀամԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեն դանում է, վոր մեր յերկրի ամբողջ աշխատավոր բնակչութեան մեջ տեխնիկական անգրագիտութեան վերացումը պետք է դառնա համապետական գործ: «Վոչ մի բանվոր և կոլխոզնիկ, վորը չգիտենա տեխնիկայի հիմունքները, վոչ մի տեխնիկական անգրագետ մարդ մեր յերկրի գործարաններում ու կոլխոզներում»—անա մեր լոզունգը:

Տեխնիկայի համար մասսայական շարժման բնթացքում պետք է ոգտագործեն այնպիսի ձևերն, ինչպիսին են Մտալինի անվան տեխնիկայի բրիգադները, տեխնիկական

հալաքը, որինակելի արտագրանքի բրիգադները, վորակավորման դասընթացքները, սեմինարները և այլն: Բայց և այնպես, ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը նախադրուշացնում է միութեան բոլոր կազմակերպութեաններին. բնդդեմ շարժնի, բնդդեմ այն միատեսակութեան, վոր վերեից կարող է սահմանվել տեխնիկայի համար մասսայական շարժման ձևերում:

ՀամԼԿՅԵՄ Կենտկոմն անհրաժեշտ է համարում արտագրական բազայով հիմնավորել մասսայական պոլիտեխնիկական կրթութեան ամբողջ սիստեմը, սկսած ՖԳՄ-ից մինչև ԲՏՈՒՀ-ը:

ՀամԼԿՅԵՄ անհրաժեշտ է դնում մանուկների և անչափահասների մեջ զարգացնել տեխնիկա-կառուցողական սիրողութիւնը (любителство) և տեխնիկական կառուցողութիւնը (конструкторство) և լայնացնել «մեկկանո»-յի (меркано) մշակման գործարանի արտագրութիւնը, ապահովելով այդ գործարանը նորագոյն գծագրութիւններով, կառուցվածքներով ու նյութերով:

ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը պիտի ստուգե կոմյետսիյուրյան բոլոր կազմակերպութիւնների գործունեւորւոյնը, յիշելով ներառնից, թե նրանք վորչափ յերեսով դարձել են դեպի տեխնիկա, վորչափ են նրանք մասսայական շարժում կազմակերպել արագրական գիտութիւնն ուսումնասիրելու համար:

Կոմյետսիականի, ամեն մի յերիտասարդ բանվորի տեխնիկական շրջահայեցողութիւնը պետք է լայնացվի: Կոմյետսիականը, յերիտասարդ հարվածայինը պետք է ըստադրինվի քաղաքական գիտելիքների միմիումով:

Այս նշանակումն է, վոր առաջին հերթին կոմյետսիականը, ապա նաև հարվածայինը պետք է գիտենան իրենց դադգյանը, ագրեդատը, լավ գլուխ հանեն, թե նա ինչպես է կառուցված, կարողանան լիաշափ ոգտագործել այն, ստա-

նան ամենաշատ արտադրականութիւն: Չսահմանափակվել այդ տեխնիկական միջոցներով յուրացնամք. կոմյերիտականը, հարվածայինը պետք է ձգտեն ամբողջ գործարանի ե արդունաբերութեան տվյալ ճյուղի տեխնոլոգիական իմացողութեան (познание) գլուխ հանեն վոչ թե միայն դադդիւնից, այլ և այն մեքենաների ամբողջ կոմպլեկտից, վորոնք արտադրական պրոցեսի ընթացքով կապված են իրար հետ:

Այդ կարելի չէ հաջողեցնել միատեսակ զբաղմունք ունեցող բանվորներին, հարվածայինների, կոմյերիտականների միջև մրցութիւնը լայն ծավալելու միջոցով, տեխնիկային ամենաարագ և լավագոյն կերպով տիրապետելու համար:

Մեքաղարդյունաբերութեան կոմյերիտականներ, հարվածայիններ, յերիսասարդ բանվորներ,

Դուք պետք է կատարեք ու գերակատարեք հալոցքներին, մարտենների ոգտագործման սահմանված չափը, ամեն կերպ լավացնելով չուգունի ու պողպատի վորակը, դուք պետք է նախաձեռնողներ դառնաք աշխատանքի ժամանակամիջոցի լավագոյն ոգտագործման համար մղվող պայքարում:

Ձերծիրսկու անվան գործարանի կոմյերիտականների որինակով դուք պետք է սկսեք շիկացած կոկսի քերմութիւնն ոգտագործելու պայքարը:

Հիշեցեք, վոր յուրացնելով տեխնիկական գիտելիքները, թափանցելով ձեր արտադրութեան տեխնոլոգիական պրոցեսները, դուք կապահովեք այս տարի ութը միլիոն տոնն չուգունի հալումը:

Դոնբասի, Կուզբասի յեւ Մոսկովամեր ավազանի կոմյերիտականներ, հարվածայիններ, յերիսասարդ հանգագործներ,

Կուսակցութիւնը, կոմյերիտամիութիւնը պահանջում են

ձեզանից մեխանիզմին տիրապետելու կատարյալ հմտութիւն. դուք պետք է գերակատարեք հանքահանման պլանը:

Կուսակցութիւնն ու կոմսոմոլը ձեզնից պահանջում են լիազափ ոգտագործել հանքահորերի մեքենաները: Աշխատանքի կազմակերպման նոր մեթոդները, փորող մեքենաների ոգտագործումը, Կարտաշովի, Լիբգարդի մեթոդները պետք է դառնան ածուխի համար մղվող ձեր պայքարի մեթոդները:

ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անգամ, վորն ուղարկված է հանքահորերը, պետք է դառնա մեքենայացման, վորակի, ածխահանման բոլշեիկյան տեմպերի համար մղվող պայքարի գաղափարների կիրառողը:

Կոմյերիտական, մեքենայակառուցման ու դյուլմեքենայակառուցման հարվածային,

Այս տարի գործել սկսող նորակառույց ձեռնարկութիւնները և դյուլատնտեսութեան կոլեկտիվացման վերցրած տեմպերը պահանջում են քո գործարանից մեքենաների, պահեստի մասերի և կահավորանքի ժամանակին ստացում: Այդ կահավորանքը պիտի դա իր ժամանակին և պետք է ունենա բարձր վորակ:

Գործադրի երեկարո—հալում, հաջողեցրու ապրանքների լավագոյն մասնադիտացումը:

Տնտեսի գունավոր մետաղները, փոխելով նրանց սեկամ բիմետաղներով (биметалл): Զարգացրու կառուցողական սիրողութիւնը:

Իմացիւր, խորճդային հզոր մեքենայի համար մղվող պայքարը — կապիտալիստական յերկրներից մեր անկախ լինելու պայքարն է, սոցիալիզմի համար մղվող պայքարը:

Նոր կառուցումների կոմյերիտականներ, հարվածային-

ներ, կովեցեք յուրաքանչյուր խորանարդ մետր բետոնի համար, շինանյութերը խնայողաբար ծախսելու համար: Մտցրեք շինարարութեան նոր մեթոդներ: Լիակատար չափով ոգտագործեցեք մեխանիզմները: Մի թույլ տաք շինարարութեան հիմնական ներդրումների փոշխացումը: Պատրաստվեցեք ժամանակին գործի դնելու ցեխերը, վաղորդք հմուտանալով դադգյահներին:

Կոմերիտականներ, յերիտասարդ հարվածայիններ, ՀԿ(բ)Կ կենսակոմի ու Ժողկոմխորի դիմումը յերկաթուղային արանսպորտի մասին՝ պարտավորեցնում է ձեզ կենտրոնացնել ձեր ճիգերը՝ շոգեատարների պարկի առողջացման, յերկաթուղայինների մեջ աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու համար:

Ձեր առաջ է կանգնած բեռնման ու դատարկման աշխատանքները մեքենայացնելու պայքարը: Դուք պետք է ամենախիստ խնայողություն հաջողեցնեք վառելիքի ծախսման մեջ: Դուք պետք է տրանսպորտին տաք դիսպետչերի բարեհույս կազմ և շոգեատարների վորակյալ վարողներ:

Սովխոզների, կոլխոզների ու ՄՏԿ կոմյերիտականներ, յերիտասարդություն, պայքարեցեք աշխատանքի ճիշտ կազմակերպման, պլանի և ռացիոնալացման համար:

Դուք պետք է կատարելապես ուսումնասիրեք տրակտորը, հմուտանաք կոմբայնին և այլ գյուղատնտեսական բարդ մեքենաներին: Աշխատեցեք լիովին ոգտագործել մեքենաները:

Խնայեցե՛ք վառելանյութերը:

Ժողովրդական տնտեսութեան բոլոր մյուս ճյուղերի կոմյերիտականներն ու հարվածայինները պետք է նույն կերպ իրենց համար նշեն տնտեսական—արտադրական գործնականութեան հանգույցային հարցերը, կատարեն իրենց ուժերի

ճիշտ դասավորում, բանվորների մասսային պայքարի հանելով բարձր տեմպերի, բարձր վորակի, ինքնարժեքի իջեցման, արտադրութեան պլանի, դիտութեան ու տեխնիկային տիրապետելու համար:

Յուրաքանչյուր ձեռնարկութեան, արդյունաբերութեան յուրաքանչյուր ճյուղում կոմյերիտիութեանը պիտի գտնի կոնկրետ ճակատամասեր, հանուն տեխնիկայի իր յեռանդը գործադրելու համար, հաստատ կերպով յուրացնելով, վոր Վմեդ հիմա պետք են մետաղի, տեկստիլի, վառելիքի, քիմիայի, գյուղատնտեսութեան, տրանսպորտի, առևտրի, հաշվապահութեան և այլ ասպարիզում բոլորեկ մասնագետներ (Ստալին—ՀամլէՅՄ համագումարում արտասանած ճառից):

Փարգործուների, ԲՏՈՒՀ-ների կոմյերիտականներ, դուք պետք է գառնաք տեխնիկական պրոպագանդա մղողներ, պոլիտեխնիզմի ջատագովներ:

Յուրաքանչյուր Փարգործու, յուրաքանչյուր ԲՏՈՒՀ պետք է լինի տեխնիկայի ասպարիզում բուրժուական ազդեցութեան, տեխնիկական պահպանողականութեան դեմ մղվող պայքարի իդեոլոգիական կենտրոն, պետք է լինի ԽՍՀՄ-ում տեխնիկայի զարգացման նոր ուղիների համար ծավալվող պայքարի կենտրոն:

Ընկեր դիտական աշխատողներ և մասնագետներ, մեր յերկրում դասակարգային պայքարի սրումը խորին շերտավորում առաջ բերեց ձեր շարքերում: Գիտութեան աշխատողների և մասնագետների վորոշ մասը դավաճանեց բանվոր դասակարգի շահերին և բռնեց վնասարարութեան ճանապարհը:

Իսկ խորհրդային դիտականների ու մասնագետների լավագույն մասն ամբողջ բռնվոր դասակարգի հետ միասին մասնակցում է սոցիալիզմի շինարարութեան:

Ձեզ սպասում են ցեխերը, վորոնք վճռական գոտեմարտ են սկսում տեխնիկական յետամնացության, տեխնիկական անկուլտուրականության դեմ:

Ձեք գիտե՞լիքներ յե՞վ փորձը միացրե՞ք յեթիսասարդության ու կոմյեթիսականների սեղծագործական եմսուզիազմի հետ:

Մորհրդային գիտնականների ու մասնագետների հետ միահամուռ ու միասնական աշխատանքի հիմունքով, կենսինյան կուսակցության և նրա կենտկոմի ղեկավարութեամբ — ավելի ընդլայնենք տեխնիկայում բոլշևիկյան ինքնաբերականութեան ֆրոնտը:

Այժմյանից կենսինյան կոմյերիտմիութեան անդամի պատասխանատու կոչումը, հարվածայինի կոչումն ստուգվում է բարձր տեմպեր ու բարձր վորակ տալու կարողութեամբ:

Այժմյանից կոմյերտականի ու հարվածայինի կոչումն ստուգվում է ղեկավարության ու տեխնիկայի խորքերը թափանցելու, իր արտադրութեան եկոնոմիկան և ֆինանսական կողմը զիտենալու կարողութեամբ:

Այժմյանից կոմյերտականն ու հարվածայինն ստուգվում է նրանով, թե վորչա՞փ նա, ինչպես պետք է, տիրապետում է պլանին, ռացիոնալացման, վորչա՞փ նա դառնում է մասնագետ, գործի իսկական տեր, իր ղաղգյահին, ցեխին, ձեռնարկութեանը քաջ ծանոթ:

Կոմյերիտմիութեան կողմից տեխնիկային տիրապետելը պետք է տա «բոլշևիկներից ամբողջ խմբերով, հարյուրամոր ու հազարամոր նոր կադրեր, վորոնք կարող են լինել գիտությունների զանազան ճյուղերի տերեր, վորոնք իրենց առերյալ գործնեյությունը կապում են սոցիալիստական շինարարութեան մեծագույն հեռանկարների, միջադպային հեղափոխութեան խնդիրների հետ:

«Մենք պետք է առաջ շարժվենք ախպես, վոր-

պետքի ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նախելով մեզ, կարողանա ասել. — ահա նա, իմ առաջավոր ջուկատը, ահա նա, իմ հարվածային բրիգադան, ահա նա, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը, — նրանք անում են իրենց գործը, մեր գործը, լավ է, աջակցենք նրանց ընդգեմ կապիտալիստների և ծավալենք համաշխարհային հեղափոխութեան գործը» (Ստալին):

Այս վորոշումը քննել ԼԿՅԵՄ բոլոր կոմիտեներում, նրա բոլոր բլիշնների բաց ժողովներում և, յեղնելով այս վորոշումից, նշել գործնեյութեան կոնկրետ միջոցառումներ:



32. Կառիլով.—Բուլղարական լեզուի դարձան մարտական խնդիրները	5 »
33. Վասիլևսկի.—1931 թ. գարնանացանի կամպանիայի գործնական խնդիրները	5 »
34. Նոր կենցաղի լեզուներ	20 »
35. Ա. Սոսնոց.—Բանաստեղծություններ	20 »
36. Լ. Չաչախյան.—Հացահատիկի ֆաբրիկա («Գիշերան») սովորողի մասին	10 »
37. Ս. Ս. Անդրեյևսկի.—Կուլտուրական շինարարության խնդիրները	7 »
38. Պ. Յալցևսկի.—Գալերիի մոնտաժ, պիեսա 3 գոր.	25 »
39. Վ. Ծովյան.—Համկոմկուսի (բ) ԿԿ-ի և ԿԿՀ 1930 թ. դեկտեմբերյան պլենումի արդյունքները	5 »
40. Գյուլաստեան Լ. Վասիլևսկի.—Գյուլաստեանության ձևապատկերը Հյուսիսային Կովկասում և նրանց դեմ կռիվող գլխավոր միջոցները	15 »
41. Ռ. Վիլսոն.—Միլիոնները մոտքի հանենք բյուրոկրատիզմի դեմ պայքարելու	15 »
42. Ա. Եկովևսկի.—Կոլտոգային շինարարության մասին	15 »
43. Ս. Մալոսեյ.—Կոլտոգային լեռներում	10 »
44. Յե. Մյուսից.—Կոլտոգային շարժումը և պայքարը կրոնի դեմ	15 »
45. Ա. Մ. Մալցևսկի.—Բերքահավաքման մեքենաների ստուգումը և խնամքը	12 »
46. Մ. Գիգոյան.—Կադավերային բերքահավաքը	8 »
47. Պ. Ռիտալով.—Ընդդեմ խեղաթյուրումների և խոտորումների կոլտոգայինարարության ասպարիզում	15 »
48. Պրոխորովսկի.—Փորձը դեպի կոլտոգային դաշտերը	12 »
49. Ի. Սալից.—Նոր պայմաններ—անտեսական շինարարության նոր խնդիրներ	12 »
50. Մ. Ազարխ.—Գյուլաստեանական հարկի որոնքը դեպի մասսաները	20 »
51. Ինչպես բաշխել բերքը կոլտոգայիններին միջև	7 »
52. Յերեսով դեպի տեխնիկա	8 »

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍԻՆԵՆ

1. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարիատի ասոցիացիայի անդամներ Գրեյ-վաճառները
 2. 16-րդ կուսամասում արդյունքները
 3. Հյուսիսային Կովկասի հեղափոխությունը.—արդ
 4. Խոզաբուծության կազմակերպումը կոլտ
 5. Կերի հարցը և սխիստացումը
 6. Կենդանաբուծության ավագ բանվորները
 7. Ձեռնարկ ծխախոտագործության համար
 8. Ճագարագործություն
 9. Թռչնաբուծություն
 10. Այնպես, որ կազմակերպումը չի լինում անհատական բաժանումը կոլտում. Լավագույն կոլտոգային փորձը Հյուս. Կովկասում
 11. Տրանսպորտը և հալսիչը. տեխնիկական ձեռնարկ
 12. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները
- «Իսկի» Ростов в-Д Буденовский пр., 60, «Крайнаиздат».

«Ազգային գրադարան»



NL0210575

43005 777
9155 6 8 609.

31.339

Цена 8 коп.

и. п. 3.0



На армянском языке

ЛИЦОМ К ТЕХНИКЕ

С.-К. Нр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
«К Р А Й Н А Ц И З Д А Т»